

Հավելված  
 ՀՀ կառավարության 2023 թվականի  
 հունիսի 16-ի N 960 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐԻ, ՀՈՒՄՔԻ ԵՎ (ԿԱՍ) ՆՅՈՒԹԵՐԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափի միա- վորը	Քանակը	Ծագման երկիրը	Արտահանման երկիրը	Արժեքը (դրամ)	Այլ տեղեկու- թյուններ
<b>ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ</b>									
1.	8702400009	Տրոլեյբուս	Տրոլեյբուսների արտադրությունը՝ 2022 թվական, չշահագործված Մակնիշ՝ YUTONG BUS ZK6128BEVG	հաս	15	Չինաստան	Չինաստան	2 078 400 000	

			<p>Անվտանգության ստանդարտներ՝ – բավարարում են ՀՀ-ում գործող ՄՄ հանձնաժողովի 09.12.2011թ.-ի թիվ 877 որոշմամբ ընդունված տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին: Գաբարիտային չափերը՝ – երկարությունը՝ 12200x50 մմ, – լայնությունը՝ 25500x20 մմ, – բարձրությունը՝ 3800 մմ-ից ոչ ավելի,</p>						
--	--	--	---	--	--	--	--	--	--

			<p>– անվային բազան՝ 6000x50 մմ: Ջանգվածը՝ – առավելագույն համախառն զանգվածը՝ 19500 կգ-ից ոչ ավելի, – լիցքավորված՝ 13500 կգ-ից ոչ ավելի Տարողությունը՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար հարմարեցված, 25+2 փափուկ նստատեղերով, 85 մարդուց ոչ պակաս տարողությամբ: Չափանիշներ՝</p>						
--	--	--	---	--	--	--	--	--	--

		<p>– տրոլեյբուսներ, որոնք կարող են աշխատել էլեկտրաէներգիայի ստացման երկու եղանակով՝ հպակային ցանցից սնուցմամբ կամ կողեզրին ուժակուտակիչ մարտկոցից սնուցմամբ՝ ինքնավար ընթացքով:</p> <p>Շարժաբեր էլեկտրաշարժիչ՝</p> <p>– առնվազն 200 Կվտ հզորություն,</p> <p>– շրջակա միջավայրի - 35°C-ից մինչև 55 °C ջերմաստիճանների պայմաններում</p>						
--	--	---	--	--	--	--	--	--

			<p>կանոնավոր աշխատելու  հնարավորություն,  –բարձր հուսալիություն և  Էներգիայի  վերականգնման  գործառույթ:  Շարժաբեր  Էլեկտրահաղորդիչի  կառավարման  ինտեգրացված  համակարգ.  կատարում է  Էլեկտրաշարժիչի, ղեկային  կառավարման  հիդրոուժեղացուցչի,  օդային ճնշակի հսկիչի  գործառույթներ՝  ապահովելով</p>						
--	--	--	--	--	--	--	--	--	--

			<p>տեխնիկական սպասարկման հարմարավետություն: Հոսանքը դուրսից համակարգ՝ աշխատում է թեթև այլումինե համաձուլվածքից, մեկուսից ծածկույթով մետաղաձողային հոսանքը դուրսից ներով, որոնց տարքը եզրաչափերից պետք է լինի 680 մմ-ից ոչ ավելի, օգտագործվում է բարձր հաճախականության օդաճնշական կառավարման</p>						
--	--	--	---	--	--	--	--	--	--

		<p>տեխնոլոգիա, որը թույլ է տալիս ղեկավարել 3 վայրկյանի ընթացքում ձողի արագ իջեցումը և իրականացնել պաշտպանությունը:</p> <p>Ուժակուտակիչ մարտկոց՝ օգտագործվում է լիթիում-երկաթ – ֆոսֆատային կուտակիչ, որը պետք է հազեցած լինի շուրջօրյա մշտադիտարկման համակարգով, ունենա ազոտային պաշտպանիչ համակարգ, մարտկոցների ջերմային կառավարման համար անհրաժեշտ հեղուկ սառեցման և</p>						
--	--	---	--	--	--	--	--	--

			<p>հեղուկ տաքացման համակարգ՝ տրոլեյբուսի անվտանգությունը բարձրացնելու նպատակով: Էլեկտրական օդային ճնշակ՝ ունի լարման ավտոմատ նույնականացման գործառույթ: Առկա է հակավթարային պաշտպանություն, իսկ գերտաքացման գերհոսքի գերլարման, ցածր լարման և ֆազի ընդհատման դեպքերում ապահովում է, որ էլեկտրաշարժիչի</p>						
--	--	--	---	--	--	--	--	--	--



			<p>համակարգն անջատվի          ժամանակին:          Անիվներ և դողեր՝          օդաճնշական 305/70R 22.5          անխուց անվադողեր՝          տրոլեյբուսների համար          պահպանաշերտերով:</p>						
	ԸՆԴԱՄԵՆԸ՝							2 078 400 000	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ